ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

14 ՀՈՒԼԻՍԻ 2021 թ.
№ 9 (1073)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՎԱՐՏՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի, որը հատկապես բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների համար հիշարժան էր: Հետևում մնացին լարված ու անհանգիստ ապրումներով քննաշրջանները, որոնք ուսանողներին տարբեր զգացողություններ պարգևեցին, սովորեցրին հետ նայել ու ամփոփել ձեռքբերումները, գնահատել ստացածն ու լուսավոր գաղափարներով շարունակել ճանապարհը:

Ու թեև վերջին տարիները դժվարին ու անսովոր էին ուսանողների համար՝ լի համավարակի, պատերազմի ու քաղաքական թոհուբոհի բարդ իրավիճակներով, սակայն Մանկավարժական համալսարանի ուսանողներն ու շրջանավարտները կարողացան պատվով հաղթահարել այդ ամենը:

Վերջին օրերի համալսարանական եռուզեռը ավարտական դիպլոմների հանձնման արարողություններով էր պայմանավորված: Հրաժեշտը պայմանական է, որովհետև բակալավրիատի շրջանավարտների մեծ մասը ուսումը կշարունակի հարազատ բուհի մագիստրատուրայում: Ուստի բարի երթ և բարի վերադարձ Մանկավարժական:

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հունիսի 25-ին մասնավոր այցով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում էր Հունգարիայի պատվիրակությունը, որը գլխավորում էր երկրի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենը:

Հավելենք, որ փոխվարչապետը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի շրջանավարտ է: 17-րդ դարի համալսարանի հետ արդեն 5 տարի երկկողմ համաձայնագրով համագործակցում է Մանկավարժական համալսարանը, որի նպատակն է գիտակրթական ծրագրերի ու ակադեմիական փոխանակումների խթանումը:

Պատվիրակության անդամները գլուխ խոնարհեցին Արցախի վերջին պատերազմում զոհված համալսարանականների հիշատակին նվիրված խաչքար-հուշաքարի առաջ, ապա այցելեցին համալսարանի երեք ֆակուլտետներ, ծանոթացան նրանց աշխատանքային գործունեությանն ու հնարավորություններին: Նաև եղան Գեղարվեստական կրթության ֆակուլկտետի ցուցասրահում:

Այնուհետև պատվիրակության անդամները մաս- ➤2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԱՐԴԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Հուլիսի 8-9-ը Մանկավարժական համալսարանում ՀՀ լեզվի կոմիտեի և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի նախաձեռնությամբ կազմակերպվեց միջազգային գիտաժողով, որ նվիրված էր արդի հայ բառարանագրության խնդիրներին ու հեռանկարին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ պրոռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը: Ողջունելով մասնակիցներին՝ նա խոսեց գիտաժողովի հիմնական թեմայի՝ հայերենի բառարանների արդիականացման մասին՝ պատմական անդրադարձ անելով բառարանագրությանը և ընդգծելով տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում և բառարանագրության ասպարեզում: «Բառարանը ժամանակի հասարակական զարգացման վեկտորն է, գրքերի գիրքը»,- իր ասելիքը ձևակերպեց պրոֆեսոր Ս. Գևորգյանը և խնդրահարույց հարցերը դիտարկեց գլոբալիզացիայի և ազգային մշակույթի զարգացման դրույթների համատեքստում:

Ողջույնի խոսք ասաց ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Կամո Վարդանյանը: «Մարդն ունի բազմաթիվ պահանջմունքներ, որոնք նրան առաջ են մղում: Դրանցից առաջինը հոգևոր պահանջմունքն է: Ներկա հանդիպումն էլ հոգևոր պահանջմունքի մի արտահայտություն է, որովհետև գիտնականի համար նման գիտաժողովները հոգևոր պահանջմունքներ են»,- ասաց Կ. Վարդանյանը:

Պրոֆեսոր Կ. Վարդանյանը խոսեց նաև ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի արդյունավետ աշխատանքի, գիտական հրապարակումների, ինչպես նաև գիտաժողովների կազմակերպման մասին, որոնք ներառում են հայ և միջազգային գիտական հանրություններին:

ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանի կարծիքով գիտաժողովի կազմակերպումը լավ առիթ է գաղափարներ փոխանակելու, ներկայացնելու արածը և ուրվագծելու հեռանկարը:

Լաբորատորիայի վարիչ պրոֆ. Լալիկ Խաչատրյանը նկատեց, որ այս կարգի գիտաժողովները նպատակ ունեն ոչ միայն ներկայացնելու Հայաստանի գիտական հանրության հետազոտությունների վեկտորական ուղղությունները, այլ դրանք մեծապես կարող են նպաստել արտերկրի հայագիտական կենտրոնների հետ կապերի ընդլայնմանն ու խորացմանը:

Լիագումար նիստում ներկաները լսեցին երեք զեկուցում: ➤2

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

➢1 նակցեցին նիստի, որին ներկա էին ՀՊՄՀ Գիտական խորհրդի անդամները և ուսանողներ:

Համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ համագործակցությունը համարեց արդյունավետ, նաև ընդգծեց, որ Մանկավարժականը հայաստանյան միակ բուհն է, որն ունի միաժամանակ երկու դիպլոմ շնորհելու իրավունք, որը նաև նորանկախ Հայաստանի պատմության մեջ այն եզակի բուհն է, որ Պազմանի կաթոլիկ համալսարանում բացել է հայագիտության ամբիոն: Հունգարիայի ուսանողները հայագիտության գծով մասնագիտանում են Մանկավարժական համալսարանում, իսկ մեր ուսանողները սովորում են Հունգարիայի համալսարանում, նաև մասնակցում ամառային դպրոցների:

Ըստ Հունգարիայի փոխվարչապետը երկու երկրների պատմությունների մեջ ընդհանրություններ նկատեց, ինչպես նաև ասաց, որ հայկական մշակույթը կարևոր դեր է ունեցել Հունգարիայի կյանքում:

Խոսակցություն ծավալվեց երկու բուհերի, մասնավորապես հայագիտության ամբիոնի հետ համագործակցային ծրագրերի, նաև ավելի մեծ թվով ուսանողների փոխանակման հարցի շուրջ:

Հայագիտության ամբիոնի վարիչ, հայագետ, դոկտոր Բալինտ Կովաչն էլ վստահեցրեց, որ նորաստեղծ ամբիոնը ակտիվ գործունեություն է ծավալել և առաջիկայում ևս միտված է նոր կրթական ծրագրերի իրականացմանը:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը խոսեց համագործացության սկզբում հանդիպած մի շարք դժվարությունների մասին, որոնք կարողացան երկուստեք հաղթահարել:

Նստի վերջում ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը բուհի Գիտական խորհրդի որոշմամբ «Մանկավարժական համալսարան» մեդալ շնորհեց փոխվարչապետ Ժոլտ Շեմյենին և Հալածված քրիստոնյաների օգնության և հունգարական աջակցության ծրագրի պետական քարտուղար Տրիստան Ազբեյին:

Հունգարական պատվիրակությունը ստացել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հայրապետական օրհնանքը:

ԱՐԴԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԸ

➢1 ՀՃՔԱՀ լեզուների ամբիոնի վարիչ, պրոֆ. Վաղարշակ Մադոյանի զեկուցումը նվիրված էր իր հեղինակած համապարփակ (ունիվերսալ) բառարանին՝ որպես ուղեցույց և ուսումնական ձեռնարկ: Պրոֆեսորը մեկնաբանեց իր կազմած բառարանի կառուցվածքը, ընդգծեց, որ անդրադարձել է բառի ուսումնասիրման բոլոր մակարդակներին և հավելեց, որ համապարփակ բառարանը և՛ տեղեկատու է, և՛ դասագիրք:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր Կարինե Աբրահամյանը ներկայացրեց իր մտորումներն արդի բառարանագրության խնդիրների և հնարավորությունների մասին, անդրադարձավ բազմալեզու բառարանների հարցին՝ ընդգծելով նրանց կարևոր դերը միջմշակութային կապերի ամրապնդման գործում: Նա անդրադարձավ նաև էլեկտրոնային բառարանների թերություններին, կարևորեց բազային բառարանների վերանայումը, խոսեց հայերենի գանձաբառարանի ստեղծման, երկլեզու և եռալեզու տերմինաբանական բառարանների ստեղծման անհրաժեշտության մասին:

Լիագումար նիստի վերջին զեկուցումը ներկայացրեց Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, բան. գիտ. թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը: Նա ներկայացրեց հայերենի դարձվածային միավորների իմաստներն ու կառուցատիպերը նույնանիշների՝ 18-րդ դարի ձեռագիր բառարաններում՝ կարևորելով հայերեն ձեռագիր բառարանների դերը հայագիտական հետազոտությունների համատեքստում: Այնուհետև զեկուցողը նկատեց, որ ձեռագիր բառարանները վիթխարի նյութ են պարունակում հայերենի լեզվական տարաբնույթ իրողությունների վերաբերյալ, ուստի անհրաժեշտ է անդրադառնալ դրանց:

Այնուհետև գիտաժողովը շարունակվեց մասնախմբերում, որոնք համանախագահում էին պրոֆ. Լալիկ Խաչատրյանը և դոց. Դավիթ Գյուրջինյանը:

Գիտական զեկուցումներով հանդես եկան՝ ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Աշոտ Փիլիպոսյանը (Հնդեվրոպական *u/wel բառարմատը լեզվապատմամշակութային և տերմինաբանական մեկնությունների համատեքստում), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դոց. Նարինե Հեքեքյանը (էլեկտրոնային բառարանագրության արդի միտումները և հայերեն էլեկտրոնային բառարանները), ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը (Հնդկական լեզուների անունները հայերենում. գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր), ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոնի տնօրեն, դոց. Հասմիկ Պետրոսյանը (Հայերեն գիտատեխնիկական տերմինների բառարանագրման հարցի շուրջ), Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ լեզուների ամբիոնի վարիչ, դոց. Հենրիետա Սուքիասյանը և դոց. Հովհաննես Զաքարյանը («Տաթև» գիտակրթական համալիր)՝ (Հայերեն բժշկագիտական եզրույթների ինքնատիպության հարցի շուրջ), ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտություններ գիտական լաբորատորիայի վարիչ, պրոֆ. Լալիկ Խաչատրյանը (Լեզվաբանական տերմինների ուսումնական նոր բառարանի առաջնահերթ խնդիրները), Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոց. Աշոտ Գալստյանը (Հուշագրության երկերում հեղինակային բառամեկնությունների հարցեր), ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը («Անձ, մարդ» բառիմաստային ենթաբազմության բառարանագրական մշակումները հայերենում), ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Հակոբյանը (Փիլիսոփայական խնդրադաշտի համատեքստում բառարանագրական մեկ հարցի շուրջ):

Հուլիսի 9-ին միջազգային գիտաժողովը տեղափոխվեց առցանց հարթակ, որտեղ պրոֆ. Լ. Խաչատրյանի նախագահությամբ մասնակիցները լսեցին հետևյալ զեկուցումները՝ բ. գ. թ. Լիլիթ Խաչատրյան (Համազգայինի Արևմտյան շրջանի գրական միավոր, Լոս Անջելես, ԱՄՆ)՝ (Գրաբարի արդի բառարանագրությունը և նրա խնդիրները), բ. գ. թ., դոցենտ Նորայր Պողոսյան (Արևմտյան թեմի առաջնորդարան, հայագիտական ծրագրերի և արխիվի պատասխանատու, Լոս Անջելես, ԱՄՆ)՝ (Հայերենի բառապաշարի տեղաշարժերը 16-18-րդ դարերում և դրա նպաստը նոր հայերենի համար), Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոցենտ Լուսինե Մարգարյան (Անկախության շրջանի Արցախի բառարանագրությունը), Գորիսի պետհամալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ. գ. թ., դոցենտ Սվետլանա Մանուչարյան (Կապանի տարածաշրջանի խոսվածքների բարբառային բառարանի կազմման սկզբունքները):

Գիտաժողովի ավարտին համանախագահներ Լ. Խաչատրյանն ու Դ. Գյուրջինյանն ամփոփեցին երկօրյա աշխատանքի արդյունքները, շնորհակալություն հայտնեցին մասնակիցներին և հույս հայտնեցին, որ հետագայում ևս կշարունակեն իրենց համագործակցությունը՝ ի նպաստ բուհերում հայագիտական առարկաների դասավանդման արդյունավետության, ի շահ հայագիտության:

Գիտաժողովի զեկուցումները լույս կտեսնեն առանձին ժողովածուով:

Մենք ուրախ կլինենք ձեզ տեսնել որպես գործընկերներ

Վերջին օրերին համալսարանում եռուզեռ էր: Ֆակուլտետներում դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություններ կազմակերպվեցին: Շրջանավարտները երախտագիտության խոսքեր հղեցին հարազատ բուհին և սիրելի դասախոսներին:

Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին ավարտական վկայականներ հանձնեցին ֆակուլտետի ղեկավարները:

Բակալավրիատի 87 շրջանավարտներից 24-ն ավարտեցին գերազանցության դիպլոմով, մագիստրատուրայի 42 շրջանավարտներից 16-ը՝ գերազանցության դիպլոմով: Հեռակա համակարգի շրջանավարտներից միայն 4-ն է գերազանցության դիպլոմ ստացել:

Շրջանավարտներին ջերմ բարեմաղթանքներ հղեց դեկան Հեղինե Խաչատրյանը:

«Սիրելի՛ շրջանավարտներ, մի պահ խորհեք և հիշեք, թե ինչ ձեռքբերումներ եք ունեցել, լցվեք երախտագիտության զգացումով և այն փոխանցեք ձեր սաներին,-ասաց դեկանը:- Ուսումնական հաստատություն մտնելուց առաջ մտածեք՝ կարո՞ղ եք ձեր մեջ ուժ գտնել ստացած գիտելիքներն անմնացորդ նվիրելու ձեր սաներին, կարո՞ղ եք լծվել այն գործին, որին կոչված եք»:

«Մենք արել ենք հնարավորը ձեր մասնագիտական զարգացման համար, մնում է դուք կարողանաք հմտորեն կիրառել այն գիտելիքները, որ տվել ենք ձեզ ուսումնառության ընթացքում,- ասաց փոխդեկան Լուսինե Պողոսյանը և շրջանավարտներին հորդորեց պահել հետադարձ կապը:-Մենք ուրախ կլինենք ձեզ տեսնել որպես գործընկերներ, ուրախ կլինենք ձեր մասին միշտ լսել դրական կարծիքներ»:

Ծնունդով վարդենիսցի Հայկանուշ Մարտիրոսյանը Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական մասնագիտացման մագիստրոս է: Բակալավրի կրթությունն ստացել է այլ բուհում, ափսոսում է, թե ինչու ավելի շուտ չի եկել Մանկավարժական համալսարան. «Ուսումնառության տարիները շատ գիտելիքներ տվեցին ինձ, նաև սեր

գիտելիքների ու կրթության հանդեպ: Եթե մեզնից յուրաքանչյուրը սիրով նվիրվի այն ոլորտին, ուր պատրաստվում է ոտք դնել, և շատ սիրի երեխաներին, նրան կարողանա տալ այն գիտելիքները, որ ձեռք է բերել այս տարիների ընթացքում, ուրեմն իզուր չի ընտրել իր մասնագիտությունը»:

Հասմիկ Այդինյանն Արարատ քաղաքից է: Սիրում է երեխաներին և ընտրել է նախադպրոցական ոլորտը: Գերազանցության դիպլոմ ստացած Հասմիկը պատրաստվում է իր գիտելիքներով նախադպրոցական հաստատությունը գրավիչ դարձնել երեխաների համար, այնպես աշխատել, որ երեխաները սիրով հաճախեն մանկապարտեզ:

Պետրոսյան Բելլան, Էջմիածնի Արտեմիդ գյուղից, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ բակալավրն ավարտել է գերազանցությամբ և անվճար համակարգում ընդունվել մագիստրատուրա: Նրա կարծիքով՝ մանկավարժությունն ամենաբարձր մասնագիտություններից է, և ոչ միայն մասնագիտություն, այլ կոչում ու առաքելություն: Նա հպարտ է, որ զինվորագրվելու է մանկավարժների մեծ բանակին և իր գիտելիքներով նպաստելու է տարրական դպրոցի զարգացմանը:

Նույն կուրսում է սովորել և գերազանցության դիպլոմ ստացել Սարգսյան Աննան: Նա ապրում է Աշտարակում: Բակալավրի դիպլոմով առայժմ կմեծացնի իր բալիկին, ապա կմտածի աշխատելու և դպրոցի նվիրյալ դառնալու մասին:

Օրը հիշարժան դարձավ նաև մի անակնկալով: Շրջանավարտներից մեկին ընկերը ծաղիկների հետ նաև ամուսնական առաջարկություն արեց՝ բոլորի առաջ ամուսնական մատանի նվիրելով:

«Մեր՝ Սկզբնական կրթության ֆակուլտետը, ՀՊՄՀ-ում հայտնի է իր ինքնատիպությամբ, ուսանողակենտրոն կրթական միջավայրով: Ասեմ ավելին և ամենակարևորը, այն «հարսնացուների օջախ» է»,- ասում է պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը:

Դիպլոմների հանձնումը շարունակվեց համալսարանի բոլոր ֆակուլտետներում, որտեղ շռայլորեն բարեմաղթանքներ հղեցին սիրելի շրջանավարտներին և հորդորեցին չմոռանալ համալսարանը, որտեղ սիրով սպասում են իրենց՝ արդեն որպես կրտսեր գործընկերների:

Ս. ԱՍՐՅԱՆ

«Հպարտ եմ այն ապդեցության համար, որ հայրիկս թողել է իմ և շատերի կյանքում»

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ ՀՊՄՀ պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի «Գաղափարական-քաղաքական պայքարը Կիլիկիայում» մենագրության շնորհանդեսը:

Գագիկ Հարությունյանն ավարտել է Երևանի պետական համալսարանը, իր գործունեության մեծ մասն անց է կացրել ԵՊՀ-ում: Կյանքի վերջին 8 տարիների գործունեությունը կապված է Մանկավարժական համալսարանի հետ:

Շնորհանդեսը վարում էր ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի համաշխարհային պատմության և նրա դասավանդման ամբիոնի պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը: Նա ընդգծեց վաղամեռիկ գործընկերոջ՝ հայոց պատմագրության կարևորագույն մի փուլի՝ Կիլիկիայի պատմության մասին գրքի կարևորությունը, ուր նա անդրադարձել է մի շարք չլուսաբանված խնդիրների:

«Այսօր բոլորս նրան հիշում ենք որպես բազմաթիվ դասագրքերի հեղինակ, որպես լավ դասախոս և գործընկեր: Գագիկը մեր ֆակուլտետին յուրօրինակ կոլորիտ էր հաղորդում»,- ասաց Խ. Ստեփանյանը:

ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանն ասաց. «Արժեքավոր մենագրության շնորհանդեսն առիթ է հիշելու մեր գործընկերոջը, ինչ-որ տեղ նաև չհաշտվելով այն մտքի հետ, թե նա չկա: Մարդն ապրում է այնքան ժամանակ, որքան նրան հիշում են: Ասել, թե Գագիկ Հարությունյանին հիշում են, նշանակում է ոչինչ չասել: Նա իրենից հետո թողել է ժառանգություն ոչ միայն զավակների, այլև ուսանողների, գիտական հոդվածների ու գրքերի տեսքով: Գիրքը բավականին արժեքավոր է այն տեսանկյունից, որ հեղինակը խորհում է Կիլիկյան պետականության խնդիրների շուրջ: Կիլիկիայի կորուստը մտածելու առիթ է տալիս՝ ովքեր էին մեղավոր պետականության կորստի հարցում: Այն հարցին, թե ինչ տեղի է ունենում մեր օրերում, 100 տարի կամ դարեր առաջ, պատասխանում է պատմագրությունը: Այսօր էլ այդ պատմագիտական խոհերն արդիական են, որովհետև մեր օրերում ևս կանգնած ենք նույն խնդրի առաջ»:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի կարծիքով գրքի շնորհանդեսը լավ առիթ է, որպեսզի խոսեն ոչ միայն գրքի, այլև հեղինակի մասին: Նա վաղամեռիկ դասախոսին բնութագրեց ինքնատիպ բառով. նա ինքնատիպ էր հարաբերություններում, վարչական աշխատանքում, ուսանողներին դասավանդելիս, հումորով: Նա շատ հեշտ ինտեգրվեց Մանկավարժականին՝ սիրվելով ուսանողների և դասախոսների կողմից:

Դեկանը շնորհակալություն հայտնեց այն մասնագիտական թիմին, որը ներդրում ունեցավ հեղինակի կյանքի 60-րդ տարվա շեմին այս արժեքավոր մենագրությունը ավարտուն տեսքի բերելու և հրատարակության ներկայացնելու գործում:

Գագիկ Հարությունյանը կմնա ոչ միայն իր ժամանակակիցների հուշերում, այլև հետք կթողնի հայոց միջնադարյան, մասնավորապես Կիլիկիայի պատմագրության մեջ:

Ելույթ ունեցավ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ով երկար ճանապարհ է անցել Գ. Հարությունյանի հետ՝ ուսանողական տարիներից մինչև դասախոսական գործունեություն: «Չափազանց համեստ ու զուսպ հայ մարդ էր, սակայն այդ համեստության հետևում մի էություն էր, որը խորապես հասկանում էր մեր ժողովրդի պատմության խնդիրները:

Նա ուներ առաքելություն, որը կատարեց, որ շարունակվելու է նաև նրա մահվանից հետո: Նա պատգամեց պահպանել և ավելի հզորացնել հայոց պետականությունը, նա կյանքով և գործունեությամբ իրականացրեց հայ մտավորականի իր առաքելությունը»:

Պատմաբանը համոզված է, որ «աշխատությունն այնչափ արժեքավոր է հայոց պատմագրության՝ միջնադարագիտության՝ Կիլիկիայի շրջանի պատմության ուսումնասիրության բնագավառում, Հայաստանում ապրող և գործող մտավորականների և ուսանողների տարբեր սերունդների համար»:

Ելույթ ունեցան գրքի տպագրման համար նախաձախնդիր ջանք ներդրած Դավիթ Թիմոյանը և Նելլի Մինասյանը:

ԵՊՀ դասախոս Դ. Թիմոյանը խոսեց Գ. Հարությունյանի այն առաքելության մասին, որով նա սերունդների մեջ հայոց պատմության հանդեպ սեր էր սերմանում: Կիլիկյան քաղաքանության հանդեպ անսահման սերը Դ. Թիմոյանին փոխանցվել է հենց նրանից:

Վերջինիս կարծիքով՝ հեղինակի աշխատությունը, որ գրված է անթերի հայերենով, բավականին բարդ է: Այն Կիլիկյան պատմագրության՝ 13-րդ դարի երկրորդ կեսի և 14-րդ դարի պատմական շրջափուլերի խորը քննական վերլուծություն է:

Նելլի Մինասյանը խոսեց աշխատանքային ու մասնագիտական թիմի մասին, որն իրականացրեց այս արժեքավոր աշխատության մշակումն ու հրատարակումը:

«Այսօր ցավալի իրողություն է, որ Գագիկ Հարությունյանը մեզ հետ չէ, բայց նա կարևոր հետք է թողել հայ պատմագրության մեջ,-ասաց ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ Էդիկ Մինասյանը, ով ճանաչում է Գ. Հարությունյանին դեռ ուսանողական տարիներից, երբ նա գերազանցությամբ ավարտեց համալսարանը: -Այս գիրքը նրա լավագույն աշխատանքի ամփոփումն է»:

Ելույթ ունեցավ և հեղինակի անթերի հայերենի մասին խոսեց, ԵՊՀ դասախոս և գրքի խմբագիր Ռիտա Սաղաթելյանը:

Հայոց պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանն իր գործընկերոջ մասին խոսելիս նկատեց՝ նա պարտաճանաչ էր, ճշմարտախոս և սրտացավ: Այս գիրքի շնորհանդեսով գործընկերներն ու հարազատները մի փոքրիկ վերածնունդ են կազմակերպել: Հնարավոր չէ մարդուն ֆիզիկապես վերադարձնել, բայց քանի կա նրա մասին հիշողությունը, նա ապրում է:

Ամբիոնի դոցենտ Միքայել Մարտիրոսյանը Գագիկ Հարությունյանի լավագույն ընկերներից է: Նրա կարծիքով՝ այս գիրքը Գ. Հարությունյանի գիտական գործունեության թագն ու պսակն է և տարիների պրպտուն աշխատանքի արդյունքը: «Այսօր մեզ պակասում է նրա կենսուրախությանը, երբ հիշում եմ նրա հետ անցկացրած ժամանակը, երախտագիտությամբ եմ լցվում»:

Մ. Մարտիրոսյանը հիշում է՝ նա ճանապարհ էր հարթում երիտասարդների համար, և ամբիոնի դասախոսների մեծ մասը պաշտպանել են նրա եռանդուն աջակցությամբ: Միաժամանակ բծախնդիր ու խիստ էր ատենախոսությունների հարցում:

Ելույթ ունեցավ Գ. Հարությունյանի կնոջ քույրը՝ Էմմա Կարապետյանը, ով առանց հուզմունքը թաքցնելու իր ափսոսանքը հայտնեց, որ գրքի լույս աշխարհ գալը չտեսան ո՛չ հեղինակը, ո՛չ էլ կինը, սակայն զավակների աշխատանքն իր արդյունքը տվեց. գիրքը չմնաց անտիպ, նրանք հետամուտ եղան գրքի հրատարակմանը ԵՊՀ և ՀՊՄՀ դասախոսների աջակցությամբ: Նա վստահ է, որ գիրքը մեծապես օգտակար կլինի Կիլիկիայի պատմությամբ հետաքրքրվողների համար:

Շնորհանդեսի ավարտին ելույթ ունեցավ հեղինակի որդին՝ Վարդան Հարությունյանը. «Նա ոչ միայն լավ հայր էր, այլև լավ պատմաբան, ով իր պատմագիտական հարուստ փորձը կարողացավ փոխանցել ինձ: Ես մաթեմատիկական կրթություն եմ ստացել, բայց հայրիկի պատմագիտական գիտելիքների կրողն եմ: Հպարտ եմ այն ազդեցության համար, որ հայրիկս թողել է իմ և շատերի կյանքում»:

Նա իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր նպաստեցին գրքի կայացմանը՝ ամփոփելով. «Ես ձեզ չեմ ճանաչում, բայց բոլորս ճանաչում ենք նույն մարդուն՝ Գագիկ Հարությունյանին, ով կա բոլորիս մեջ»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՆՎԻՐՈՒՄԸ ԴԱՐՁՐԱԾ ԱՊՐԵԼՈՒ ԿԵՐՊ

Լրացավ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանի ծննդյան 75-ամյակը և մանկավարժական գործունեության 60 տարին: Բեղուն աշխատանքային գործունեություն՝ Հայաստանի և Սփյուռքի տարրական դպրոցների ուսուցիչների պատրաստում ու վերապատրաստում, բազմաթիվ դասագրքերի, մենագրությունների ու մեթոդական ձեռնարկների հրատարակում: Ամենատարբեր կոչումներ ու պարգևներ՝ վաստակաշատ ու վաստակաբեր գործունեության ճանապարհին…

Սա է երջանկությունը՝ ունենալ հարուստ կենսագրություն, որը պատիվ կբերեր յուրաքանչյուր մասնագետի:

Կարծես տարիներն աննկատ անցել են մանկավարժական գիտությունների դոկտորի կողքով. նույն երիտասարդական ավյունով դասավանդում է, իրենով լցնում ուսանողական լսարանը, իր գիտելիքների հարուստ գանձարանից մաս առ մաս տալիս ուսանողներին և ուրախանում նրանց հաջողություններով:

Քանի՞ սերունդ է նա ճանապարհել դեպի դպրոց, քանի՞ անհատականության մեջ է սերմանել իսկական արժեքներ, ոչ միայն մասնագիտական գիտելիքներ է տվել, այլև սովորեցրել մարդ լինելու արվեստը: Այս ամենն արել է սիրով, անսահման նվիրումով, կրթության լույսով ուսանողի մեջ գիտելիքներ ստանալու ձգտումը միշտ վառ պահելով, հավատալով ուսանողին, նրա մեջ սեր բորբոքելով մայրենիի հանդեպ և միշտ մնալով ուսանողի կողքին ու նրա բարեկամը:

Թերթում եմ Ջուլիետա Գյուլամիրյանի ֆեյսբուքյան էջի գրառումներն ու լուսանկարները՝ տարբեր տարիների հիշողություններն իսկական հուշամատյան են՝ նվիրված յուրաքանչյուր ուսանողին. «Նոր բարեկամներ ձեռք բերելու արվեստն ինձ համար չափազանց բարձրարժեք է», «Եվս մի սերունդ կյանքի ուղեգիր նվաճեց: Բարի վայելում. բարձր կպահեք, հավատացած եմ, մեր համալսարանի պատիվը»:

Գրում են նաև ուսանողները. «Հետաքրքիր օրերի շարքից… Այսօր հանդիպեցինք մեր շատ սիրելի ընկեր Գյուլամիրյանի հետ: Բացի այն, որ հանդիպումը շա՜տ հաճելի էր, այն նաև հագեցած էր: Նոր գիտելիքներով զինված բաժանվեցինք միմյանցից՝ կրկին հանդիպելու ակնկալիքով»:

«…Շնորհակալ ենք, սիրելի ընկեր Գյուլամիրյան: Հուսով ենք, որ այսպիսի հանդիպումները շարունակական բնույթ կկրեն»:

Ալիտա Թուխոյանը գրում է. «Իսկ բառերն ի զորու չեն արտահայտելու այն սերն ու ակնածանքը, որ տածում եմ Ձեր հանդեպ… Քանի-քանի սերունդներ եք կրթել ու քանիսն էլ դեռ պիտի կրթեք… Ու ես հիմա պիտի հպարտորեն բարձրաձայնեմ, որ պատիվ եմ ունեցել Ձեր ուսանողը լինելու, ու ավելի մեծ ուրախությամբ փաստել, որ շարունակելու եմ աշխատել Ձեզ հետ, հարգարժա՛ն տիկին Գյուլամիրյան… Վստահ եղեք, որ Ձեր կատարած աշխատանքը կտա իր արժանի պտուղները: Շնորհակալ եմ և հպարտ…»:

Հերմինե Պետրոսյանի գրառումը. «Այո, իսկապես մեծ պատիվ և հպարտություն է Ջուլիետա Գյուլամիրյանի ուսանողուհին լինելը, անգամ նրա հետ շփվելը… այդքան բարություն, մարդասիրություն, հոգատարություն, ազնվություն և ամենա-ամենալավը ինչպես եք տեղավորել Ձեր մեջ, սիրելի տիկին Գյուլամիրյան…»:

Իսկապես գրառումները խոսուն են, նրանք պատմում են դասախոսի, կրթության իսկական նվիրյալի մասին, նրանք կենսագրություն ու պատմություն են կերտում:

Խորհում եմ՝ որքան անմնացորդ պետք է նվիրվել մասնագիտությանն ու սիրած գործին, որ չզգաս սահող տարիները, որ կարողանաս ուսանողների սերն ամբարել քո մեջ ու քո նվիրումը նրանց համար դարձնել ապրելու կերպ. կյանքին ու ապագային մաքուր ու լուսավոր հայացքով նայելու դասական օրինակ:

Շնորհակալություն, տիկին Ջուլիետա Գյուլամիրյան, ձեր նվիրումի և այն սիրո համար, որ փոխանցում եք Մանկավարժական համալսարանի սերունդներին, որ ուսանողի օրը տոն եք դարձնում, որը ժամանակ ու սահման չի ճանաչում, որ ձեր իմաստուն խորհուրդներով իմաստնացնում եք ուսանողին, ոգևորում ու թևեր տալիս նրան… այն ուսանողին, որը մեր երկրի ապագայի երաշխավորն է:

Շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան հոբելյանի և աշխատանքային գործունեության վեց տասնամյակի առթիվ: Եղեք առողջ, թող երջանկությունն ու հաջողությունները մշտապես լինեն Ձեր կյանքի ուղեկիցները: Համալսարանը հարուստ է նաև Ձեզ նման անհատականություններով, որոնք կերտում են կրթության ոլորտի և բարձրագույն ուսումնական հաստատության տարեգրությունը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Դաշտային պրակտիկան Արագածոտնի և Ծիրակի մարզերում

ԱՐԱԳԱԾՈՏՆ

Բնագիտական ուղղվածությամբ սովորող ուսանողների համար մեծ նշանակություն ունեն բնության գրկում անցկացվող պրակտիկաները, որոնք հնարավորություն են ընձեռում սեփական աչքով տեսնել այն կենդանատեսակներին ու բուսատեսակներին, որոնց երկար ժամանակ ուսումնասիրել են լսարանային պայմաններում: Հենց այս ամենը հաշվի առնելով, ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանի շնորհիվ և համալսարանի աջակցությամբ, հունիսի 29-ին կենսաբանության բաժնի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներն ունեցան գիտահետազոտական պրակտիկա Արագածոտնի մարզում՝ ամփոփելով կենդանաբանություն և բուսաբանություն առարկաներից ստացած գիտելիքները:

Սկզբում կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտաշես Ջիրոյանն ուսանողներին ներկայացրեց կիսաանապատային գոտու 1000-1300 մետր բարձրության վրա աճող բուսատեսակները: Այնուհետև նրանք եղան Տառերի պուրակում որտեղ կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարո Քոչարյանի և կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանի հետ միասին ուսումնասիրեցին տեղի կենդանական աշխարհը:

Այցելության հաջորդ կանգառն Ամբերդ ամրոցն էր, որտեղ ևս իրականացվեցին հետազոտություններ: Դե, իսկ վերջում խխումբը եղավ Արագածում, ուսումնասիրություններ իրականացրեց Քարի լճի և հարակից տարածքներում:

Այցելությունն ուսանողներին տվեց նոր գիտելիքներ, հնարավորություն ընձեռեց սովորածը կիրառել բնության մեջ, ձևավորեց նմանատիպ այցելություններ իրականացնելու հմտություններ և, իհարկե, օգնեց իրար ճանաչել լսարանից դուրս ու իրար բացահայտել յուրովի…

Այսպիսով կարող ենք վստահեցնել, որ հենց նմանատիպ այցերն են օգնում ձևավորել հմուտ ու բանիմաց բնագետներ:

➢6

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ՝ «ՈՒՐԱԽ ՂՈՂԱՆՋՆԵՐ»

Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցի 4ա դասարանի հրաժեշտի հանդեսը տեղի ունեցավ հունիսի 30-ին, համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում: Տոնական տեսք ստացած դահլիճը լեփ-լեցուն էր ուսուցիչներով, ծնողներով ու հյուրերով: Չորրորդ՝ տարրական դպրոցն ավարտող 35 աշակերտները բեմում վարպետորեն ներկայացրին դասվար Կարինե Չիբուխչյանի մտահղացում-նախաձեռնությունը. բեմում «Ուրախ ղողանջներ»հեռուստաընկերությունն էր՝ իր տարաբնույթ հաղորդաշարերով, լրագրողներն էլ աշակերտներն էին:

Հրավիրել էին առաջիկա ուսումնական տարվա առաջին դասարանցիներին. այս տարի դպրոց կհաճախի 62 առաջին դասարանցի, դպրոցը կունենա երկու առաջին դասարան: Մինչ միջոցառումն սկսելը դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը բարի գալուստ մաղթեց փոքրիկներին, որոնց ուսուցիչները նվերներով ճանապարհեցին դահլիճ: Վերջիններիս համար հաճելի անակնկալ էր ներկա գտնվել դպրոցական միջոցառմանը:

Ավարտական դասարանի տոնական թողարկումը դպրոցականներն սկսեցին լուրերով. նախ բարձրաձայնեցին, որ ՀՊՄՀ հիմնական դպրոցը առաջինն է և լավագույնը, իսկ «թեժ գծից» հաղորդեցին, որ հիմնական դպրոցի չորրորդ դասարանցիները Կուլտուրայի ֆակուլտետի տոնականորեն ձևավորված դահլիճում են, որտեղ փոքրիկ «լրագրողը» հարցեր ուղղեց տնօրենին, դասվարին, ուսուցիչներին:

Հաջորդը «Պատմության անիվ» հաղորդաշարն էր. դպրոցականները պտտեցին պատմության անիվը, հիշեցին՝ ինչպես առաջին անգամ եկան դպրոց, զարմացան՝ ինչպե՞ս անցան չորս տարիները. «Տեսեք, թե որքան ենք մենք փոխվել առ այսօր, ժամանակն է, որ զարմացնենք Ձեզ…»: Ապա երգեցին. «Ակնթարթի պես օրերը անցան…Շատ չարաճճիություններ ենք արել …Պարզապես մենք ձեզ այդպես ենք սիրել, Ձեր մանկությունն ենք ձեզ հիշեցրել…»:

«Դպրոցը՝ ամրոց, Դուք մեր լեռն եք,- դիմեցին դպրոցի տնօրենին,-Դուք մեզ համար մայր եք»,- ասացին դասվարին, շարունակեցին պտտել անիվը և տարիների միջով հետ գնացին՝ հիշելով՝ ինչպես սեպտեմբերի 1-ին վախվորած աչուկնեով մտան դպրոց և հաջորդ պահին հասկացան, որ «վախենալու ոչինչ չկա, երբ աշխարհում կան ուսուցիչ ու մայրիկ»:

Հայերենով, ռուսերենով և անգլերենով երախտիքի խոսքեր ուղղեցին ուսուցիչներին՝ ներկայացնելով ստացած գիտելիքները, նաև շնորհակալություն հայտնեցին. «Լույսի բանալին մեզ տալու համար, կյանքում մեր տեղը ցույց տալու համար ընդմիշտ Ձեր առջև խոնարհվում ենք մենք…»:

«Երաժշտական փոստարկղ» հաղորդաշարն էլ ներկայացրին Քաջ Նազարի և Ուստիանի կերպարներով, «Խելոք գլուխ» ակումբում խնդիրներ լուծեցին:

Հուզիչ էր «Իմ Ուսուցիչ» երգի կատարումը, երբ դպրոցականների հետ կողք կողքի երգեցին նաև ուսուցիչները:

Միջոցառումը շարունակվեց «Մանրապատումներ» և «Երգ երգոց» հաղորդաշարերով.

Սա մեր դպրոցն է, սա մեր դահլիճն է,
Իմ ընկերներն են՝ մի մեծ ընտանիք,
…Հենց այստեղ էլ ապրում ենք՝
Մեր այս լավ դպրոցում…

«Երգ երգոց»-ի «հաղորդավարները» վստահեցրին, որ երգն օգնում է թե՛ ուրախ, թե՛ տխուր պահերին, օգնում է ապրել…

Է՛լ սպորտային լուրեր, է՛լ աստղագուշակ… հեռուստատեսային հաղորդաշարերը հարմարեցվել էին դպրոցականներին: Ահա նրանք գուշակում են դասարանցիների ապագան 1930 թվականին. յուրաքանչյուրը կյանքի մի ասպարեզի առաջավոր է, հայտնի դեմք, Նոբելյան մրցանակակիր…Ապա եզրակացնում են՝ ինչ հաջողությունների էլ հասնեն, որտեղ էլ լինեն, ամենակարևորը մարդ մնալն է:

Հեռուստածրագիրն էլ ավարտեցին «Կեսօրն անց» հաղորդումով, որտեղ ամփոփեցին, թե ինչպես քայլ առ քայլ անցան չորս տարիները, ինչպես աստիճան առ աստիճան բարձրացան գիտելիքների ձեռքբերման ճանապարհով, թվերի լեզվով ներկայացրին դասերն ու դասղեկի ժամերը, դասամիջոցներն ու դպրոցական բուֆետից օգտվելը… Մի խոսքով՝ պատմեցին դասարանի ու յուրաքանչյուր դասարանցու մասին:

Մոտեցավ տարրական դպրոցին հրաժեշտ տալու պահը, ուրախացան, հուզվեցին ու տխրեցին 35 աշակերտներ, 35 հրաշքներ և նրանց «ռեժիսորը»՝ դասվար Կարինե Չիբուխչյանը, ով այս յուրահատուկ և իր կյանքի ամենադժվար տարիների դասարանին մաղթեց հարթ ընթացք և բարի երթ: Նրանք ապրեցրին իրեն, թող 2020 թվականներ այլևս չլինեն նրանց կյանքում: Երդվեցին միջին դպրոցում պահել տարրական դասարանի ավանդույթները:

Դասվարը շնորհակալություն հայտնեց գործընկերներին, որոնք երեխաներին կարողացան պայծառ ժպիտներ պարգևել:

«Երբ դասվարը բազմաշնորհ ու նվիրված է, դասարանն էլ այսպես յուրահատուկ է,- ասաց դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը,- «Դուք այս երեխաների մեջ սերմանեցիք սեր, մարդ լինելու ձգտում, դաստիարակեցիք հայրենասեր մարդ: Հաջորդ սերունդը Ձեզ է սպասում»: Չորրորդցիներին դիմելով՝ տնօրենն ամփոփեց. «Դուք անհատականություններ եք՝ բազմազան դրսևորումներով»:

Տնօրենը շնորհակալություն հայտնեց դասավանդած բոլոր ուսուցիչներին ու նաև ծնողներին, որոնք միշտ եղել են երեխաների թիկունքում: Ապա բեմ հրավիրվեցին ուսուցիչներն ու դասղեկը, ով այսուհետ իր շուրջը պիտի համախմբի երեխաներին, օգնի հաղթահարել միջին դպրոցի դժվարությունները:

Միջոցառումն ամփոփվեց «Ուրախ ղողանջներ» հեռուստաընկերության «Եղանակի տեսությամբ», որն ավետեց՝ երեկոյան բոլորի տներում կլինի ջերմություն, որովհետև օրը տոնական էր ու գեղեցիկ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Դաշտային պրակտիկան Արագածոտնի և Շիրակի մարզերում

➢5 Դաշտային պրակտիկաներն անչափ կարևոր են տեսական գիտելիքներն ամրապնդելու առումով: Այդ նկատառումով էլ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ այդ պրակտիկաները շարունակական բնույթ են կրում:

Այս անգամ ուսանողները Շիրակի մարզում էին: Սկզբում այցելեցին Սառնաղբյուրի արհեստական ջրամբար, որը գտնվում է Սառնաղբյուր գյուղից 2 կմ արևմուտք՝ Ճլկան գետի վերին հոսանքում՝ շուրջ 1000 մետր բարձրության վրա: Ուսանողներին դիմավորեցին գյուղի ղեկավարները. հենց նրանք էլ ներկայացրին ջրամբարի պատմությունն ու ընդգծեցին կարևորությունը: Այստեղ Վարդուհի Հովհաննիսյանի գլխավորությամբ ուսանողներն իրականացրին մի շարք չափումներ և հետազոտություններ:

Հաջորդ կանգառը Ջաղան էր կամ Անձավաջուրը: Ըստ ավանդության՝ այդ քարայրում ճգնել է Գրիգոր Լուսավորիչը: Այստեղ ուսումնասիրություններ կատարելուց հետո գիտական արշավախումբն ուղևորվեց Թալինի Հոգեվանք եկեղեցի: Տաճարն ունի ընդարձակ ու հանդիսավոր, սակայն գմբեթավոր մույթերով մասնատված ներքին տարածություն: Ներսի պատերը ծեփված են եղել կրաշաղախի բարակ շերտով, որի վրա տեղ-տեղ պահպանվել են երբեմնի որմնանկարների պատառիկներ:

Դե իսկ հաջորդ կանգառը Գյումրին էր, որն այցելուներին ընդունեց իր կոլորիտային ողջ գունեղ ներկապնակով:

Ճանապարհին աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիմա Դայանը Գյումրին ներկայացրեց աշխարհագրական և մշակութային տեսանկյունից:

Նախ ուսանողներն այցելեցին Ֆրունզիկ Մկրտչյանի թանգարան, որտեղ ծանոթացան դերասանի կյանքի պատմությանը, ապա ստացած հույզերով ուղևորվեցին դեպի Գյումրու հրապարակ, ծանոթացան մի շարք հայտնի ֆիլմերի նկարահանման վայրերին:

Եղան նաև Գյումրու Սուրբ Աստվածածին եկեղեցում, որից հետո ուղևորվեցին Սև բերդ, որի կառուցման անհրաժեշտությունը ծագել է ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտից հետո: Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմը հաշվի առնելով՝ ռուսները սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել Գյումրու ամրացմանը: 1828 թվականին Թիֆլիսի զինվորական նահանգապետը Անդրկովկասում գլխավոր հրամանատար Իվան Դիբիչին նամակ էր հղել, որում ասվում էր. «Թուրքերի դեմ հնարավոր պատերազմի դեպքում անհրաժեշտ կլինի Գյումրիում կառուցել բերդ և այն խիստ ամրացնել որպես կարևորագույն ռազմական հենակետ»:

Սև բերդն ի սկզբանե եղել է Ալեքսանդրապոլի պաշտպանական կառույց, ծառայել է, որպես զինվորական բանտ:

Հաջորդ կանգառը Արթիկն էր, որտեղ Արմեն Աջամօղլյանի ուղեկցությամբ ուսանողներն այցելեցին հիդրոպոնիկ եղանակով աճեցվող ելակի ջերմոցներ և ծանոթացան աճեցման կարգին:

Վերջին կանգառը Հառիճավանքն էր, որտեղ նրանք մասնակցեցին ժամերգության և վերադարձան տուն՝ իրենց հետ տանելով տպավորություններ, գիտելիքներ և անգին հիշողություններ…

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ



ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ.

ԻՄ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԽՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԻՍՏ սիրելի, դու կդառնաս 91 տարեկան:

91-ՆՆ ի՞նչ է, կապրեիր, էլի:

Կապրեիր, եթե քո տանը, քո կողքին ունենայիր ո՛չ թե քո հեղինակությունը, այլ ՔԵ՛Զ սիրող կնոջ: Չունեցար… Եվ երբ Վահագն տղայիդ հետ (մենա՜կ, անօգնակա՜ն) վերադարձար Փարիզից, ուր Վահագնի բուժմանը հույս չէին տվել, դու ջարդված էիր արդեն, և մենք կորցրեցինք քեզ: Իսկ դու ընդամենը 63 տարի էիր հասցրել վայելել այս արևի լույսը:

Հիմա, իմ հպարտություն, իմ տխրություն ԱՐՏԻՍՏ, ծննդյանդ 91-ամյակին ի՞նչ նոր ասելիքով քեզ շնորհավորեմ: Ի՞նչ նոր բան պիտի ասեմ, եթե արդեն քեզ նվիրված երկու վավերագրական ֆիլմի և 4 գրքի հեղինակ եմ, ու այնտեղ ամեն, ամեն ինչ ասված է:

Քեզանով հպարտ լինողի ուրախությունս հայտնելու պահին նաև նեղվածությո՞ւնս կիսեմ քեզ հետ, թե ինչպես քո ծննդյան 80-ամյակը (2010թ.) «չնկատեց» կամ չուզեց նկատել այն ժամանակվա մեր մշակույթի վայ նախարարը: «Չնկատեց» նաև, երբ լրացավ քո ծննդյան 85-ամյակը (2015 թ.): Նա՝ այդ նախարարը, պարզապես ստվեր էր քեզանից ճառագող լույսերի մեջ: Բայց, հուրախություն ինձ ու շա՜տ շատերի, քո լույսերի մեջ քեզանով հպարտ շատ, չափազանց շատ ազնիվ մարդիկ կային: Մեկը «Մոսկվա» կինոթատրոնի տնօրեն Մարտինը (լույս նրա արդար շիրիմին), ով քո ծննդյան 85-ամյակի օրը սիրով ընդունեց քեզ նվիրված ֆիլմերի ու գրքերի համահեղինակներ ինձ ու Շուշանիկ Սահակյանին, զարմացավ, թե՝ ինչո՞ւ միայն ձեր արած գործերով պիտի նշվի «մեր սիրելի, մեր ազգի պարծանք Ֆրունզի հոբելյանը» և սիրահոժար տրամադրեց կինոթատրոնի 450 տեղանոց դահլիճը, ուր ցուցադրեցինք «Է՜ն ուրիշ Ֆրունզիկը» մեր ֆիլմը:

Դա, ԱՐՏԻՍՏ սիրելի, մեր խնկարկումն էր քո պայծառ հիշատակին: Քո լույսերից ավելի պայծառացած ու քեզ չափազանց բարձր գնահատող նկատելի համբավ ունեցող շատ մարդիկ էին եկել «քեզ հետ հանդիպելու» «Մոսկվա» կինոթատրոնի այդ դահլիճում: Նրանք տեսան, զգացին քո ներկայությունը, տեսան՝ ինչպես դու էկրանից բարևեցիր իրենց, ինչպես էկրանից իջար ու մեզ միացար, և բոլորով նայում էինք քեզ, հիանում էինք քեզանով, պարծենում, թե ԱՐՏԻՍՏԻ հետ շփվելու ի՜նչ զմայլելի պահեր ենք ապրում:

Ուրեմն ի՞նչ նոր բան գրեմ, ԱՐՏԻՍՏ, որ չկրկնեմ 2010 թվականից քո մասին բոլոր, բոլոր գրածներս: Այդ թվականից առաջ էլ, երբ ուզում էի մի նկատելի վերաբերմունքով շնորհավորանք ունենալ քո ծննդյան 80-ամյակին, ես շատ երկար որոնեցի է՜ն ուրիշ Ֆրունզիկին: Որոնեցի ընկերների հետ ունեցած քո զրույցներում, նկարիչների տան հարևանությամբ գործող սրճարանում, ուր սիրում էիր այցելել մանվանդ հյուրախաղերից վերադառնալուց հետո: Որոնեցի բուհերում, մշակույթի սրահներում քո արվեստի երկրպագուների հետ հանդիպումներից մնացած ձայնագրություններում… Իմ այդ փնտրտուքի մեջ են ծնվել քեզ հետ իմ ունեցած կենդանի (երանի այն մի քանի առիթներին, որ քեզ հետ շփվելու պատիվն ունեցա) և արդեն, ավաղ, վիրտուալ զրույցները: Դրանց հենքի վրա էլ ստեղծվեցին քեզ նվիրված ֆիլմերն ու գրքերը:

Գուցե հիմա ուրախությո՞ւնս հայտնեմ, թե ֆեյսբուք կոչված այս հարթակում մի ամբողջ ամիս է արդեն քո արվեստի երկրպագուներն ի՜նչ հրավառություն են անում՝ «Միեր Մկրտչյանի 91-ամյակին ընդառաջ» ընդհանուր խորագիրն ունեցող իրենց երախտագիտության խոսքերով, քեզ նվիրված պատկերապատումներով:

Քո՛ անունից, ԱՐՏԻՍՏ, շնորհակալ լինեմ նրանց բոլորին:

Եվ հիմա, քեզ ու ընթերցողներիս չհոգնեցնելու համար, ավարտեմ այս պահի ասելիքս՝ վերհիշելով քեզ նվիրված «Է՜ն ուրիշ Ֆրունզիկը» մեր ֆիլմի ցուցադրումներից մեկի ընթացքում թղթակցի հարցին իմ մեկ նախադասությամբ տրված պատասխանը: Թղթակիցն ինձ հարցրեց.

- Ո՞վ է Ձեզ համար Միեր Մկրտչյանը:

- Իմ հպարտությունը և… իմ տխրությունը,-ասացի ես և … ավելի տխրեցի:

Շնորհավոր ծնունդդ, իմ հպարտություն, իմ սիրելի ԱՐՏԻՍՏ:

Երանի քեզ, որ այսքան շատ երկրպագու ունես:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ



Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Գալստյանի հեղինակած «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» գիրքը (Բ) արդեն ընթերցողի սեղանին է: Այն նվիրված է գեղարվեստական վավերագրության ժանրի լեզվաոճական քննությանը՝ սկսած 19-րդ դարի 60-ական թթ. մինչեւ 21-րդ դարի 10-ական թթ.:

Հեղինակն աշխատության մեջ ներկայացրել է գեղարվեստական-վավերագրական երկերի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, բնագրերի պատկերավորման-արտահայտչական համակարգը:

2 գլուխներից կազմված գրքում հանգամանորեն ներկայացված է գոյականի, ածականի, թվականի, դերանվան, բայի, չթեքվող խոսքի մասերի կիրառական և հուշագրական առանձնահատկությունները:

Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանի հեղինակած գիրքը նախատեսված է բանասերների, ոճաբանների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

Խմբագիրը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանն է, գրախոսները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Ավետիսյանն ու մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյանը:

Գրքի վերջնամասում զետեղված են բառարաններ ու քարտեզներ, մատնանշված են պարբերական մամուլն ու բնագրային օրինակների սկզբնաղբյուրները:

Լույս է տեսել «Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940 թթ.) Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան» գիրքը:



ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի հեղինակած աշխատությունը նվիրված է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Կիպրոսի թեմի վերակազմության գործընթացին: Գրքում առանձին անդրադարձ է կատարվում Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի գործունեությանը՝ որպես Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդ և կաթողիկոս, ինչպես նաև 1920-30-ականներին Կիպրոսում կիպրահայերի հաստատմանն ու թեմի վերակազմավորմանը, Կիպրոսի թեմի ջանքերին՝ հայապահպանության և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, եկեղեցու և սփյուռքի պատմության հարցերով հետաքրքրվողների համար:

ԱՐԴԵՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Ասում են՝ երազանքներն անպայման իրականանում են, եթե հավատում ես դրանց և դարձնում նպատակ. Ես արեցի դա: Այսօր իմ երազանքներից մեկն արդեն իրականություն է: Գեղեցիկ ու հուզիչ է ամեն բան այս պահին, և պատկերացումներն են մի քիչ տխուր, չէ՞ որ էլ առաջվա պես հաճախ չեմ այցելելու համալսարան, որ էլ հին օրերի պես 80 րոպե դասին չեմ նստելու ու հաշվեմ վերջին րոպեները, որ էլ ընկերներիս հետ չեմ շտապելու ճաշարան՝սուրճ խմելու կամ ճաշելու: Կարոտելու եմ ամեն պահը, չէ՛, ավելի ճիշտ, արդեն կարոտում եմ: Կյանքիս ամենագեղեցիկ 6 տարիներն անցան ՀՊՄՀ-ում, և այս տարիներիս համար ուզում եմ նվիրված և անշահախնդիր աշխատանքի համար շնորհակալություն հայտնել աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի բոլոր դասախոսներին: Շնորհակալ եմ իմ Ուսանողական խորհրդին՝ իմ ուսանողական տարիներն այսքան դրական հույզերով ու լույսերով լցնելու համար, ամեն օրս հիշարժան դարձնելու համար: Այ, առանց ուսանողական խորհուրդ մտնելու շատ տխուր կլինեն օրերս, կարոտելու եմ ֆակուլտետների նախագահներին զանգել և ցուցակ ուզելուն, նիստերից առաջ գրվող նամակներին ու իհարկե հեռախոսի հաղորդագրությունների ծլնգոցները…

Կողքից մի փոքր զարմանալի գուցե թվան իմ այս տողերը, բայց նրանց մեջ մի մեծ աշխատանք է կուտակված: Ուսանողական խորհուրդը մեծ տեղ ունի իմ կյանքում, հենց այս կառույցի միջոցով ես կարողացա կայանալ, ավելի ինքնավստահ լինել, ձգտել հաջողությունների, արժևորել ամեն օրս և, իհարկե, ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնել ուսանողական օրերս: Հպարտ եմ, որ սովորել եմ և այսօր գերազանց ավարտում եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Զրո են բոլոր այն կարծրատիպերը, թե թերի է Մանկավարժական համալսարանի ուսուցումը, իրականում ամեն բան մեր ձեռքերում է, և մենք ենք ընտրում՝ ինչպես սովորենք և ինչպես ապրենք ուսանողական օրերը: Շնորհակալ եմ այն մարդկանց, ովքեր այս 6 տարիներին ամեն պահ իմ կողքին են եղել, աջակցել և ոգևորել են ցանկացած հարցում: Իմ յուրաքանչյուր գեղեցիկ օրվա համար շնորհակալ եմ ձեզ: Եվ ամենաշատը շնորհակալ եմ Մանկավարժականին, որ ինձ տվել է այսքան թանկ ու կարևոր մարդկանց: Եվ, իհարկե, շնորհակալ եմ բուհի բոլոր աշխատակիցներին՝ միշտ ուսանողի կողքին լինելու համար, ուսանողին առաջ գնալու լայն հնարավորություններ տալու համար:

Ես գնում եմ՝ քեզ հավերժ հիշելու և հաճախ քեզ այցելելու պայմանով, իմ սրտի համալսարան, ես գնում եմ՝ ինձ հետ տանելով կյանքիս ամենագեղեցիկ 6 տարիները: Կյանքիս ևս մեկ քննություն ավարտված է…

Լարիսա ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Լանդշաֆտային պլանավորում մասնագիտության մագիստրոս

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ, ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Ուզում եմ մի փոքր պատմել իմ անցած չորս տարիների մասին: 2017 թվականի սեպտեմբերի 1-ին սկսվեց իմ կյանքի ամենակարևոր փուլերից մեկը. ես ոտք դրեցի Մանկավարժական համալսարան, և զգացողություններս այնքան ուրիշ էին:

Ես հիշում եմ՝ բոլորն այդ օրը շատ խառն էին, մասնավորապես դեկանատի աշխատողները և ուսանողական խորհուրդը: Ինձ մոտ տպավորություն էր, թե նրանք բոլորն ուզում են մեր օրը էլ ավելի լավը դարձնել…

Ու սկսվեց իսկական ուսանողական կյանքը՝ դեկանատը չտարբերել ամբիոնից, լսարանները խառնել, միջանկյալի ցածր գնահատականից նեղվել և այլն: Իսկ հիմա ես վստահեցնում եմ, որ ընդամենը մի ակնթարթ է տևում այս 4 տարին, և դու պիտի հասցնես ապրել այդ պատերի ներսում, արտասվելու պակաս չունենաս հիասթափություններից, ծախողումներդ գեղեցիկ կերպով ծալես ու դնես մի կողմ, որովհետև մանկավարժականի պատերը քեզ սովորեցնում են ուժեղ լինել, դասախոսները ծանոթացնում են քեզ կյանքի քմահաճություններին, և դու այդ ընթացքում պիտի իրենցից անընդհատ սովորես՝ ինչպես հասնել ճշմարտության, ինչպես համակերպվել այդ ամենի հետ:

Եվ եկավ այն պահը, երբ ես ուզում եմ շնորհակալ լինել քեզ՝ իմ Մանկավարժական, իմ ուսանողական խորհուրդ՝ չկա ձեզ նմանը, ամբիոնի ու դեկանատի աշխատողից մինչև դասախոս, դեկանից մինչև իմ ամենալավ պրոռեկտորներ ու

ռեկտոր, շնորհակալ եմ Ձեզ: Սա կաղապարված շնորհակալություն չի, սա անկեղծ շնորհակալության խոսք է Ձեր անսահման աշխատանքի, ձեր ուսանողակենտրոն քաղաքականության, ուսանողին ամենահնարավորը տալու համար:

Անկեղծ երախտիքի խոսքեր ենք հղում մեր բոլոր դասախոսներին, սեմինարավարներին, նաև ընթերցասրահի աշխատողներին, որոնք համբերատարությամբ մեզ հորդորում էին ընթերցասրահում հեռախոսով չխոսել:

Մի խոսքով, իմ ամենահարազատ համալսարան, շնորհակալ եմ իմ ամենալավ 4 տարիների համար, ես շարունակելու եմ քայլել քեզ հետ, մագիստրոսական կրթությունս քո պատերի ներսում անցկացնել:

Սվետա ՍԱՐԳՍՅԱՆ
Հոգեբանության ֆակուլտետի
Ուսանողական խորհուրդ

Կյանքիս չկրկնվող ու լուսավոր ակնթարթները

Եթե ինձ երբևէ հարցնեն՝ կյանքիս ո՞ր շրջան կուզեի վերադառնալ, առանց երկմտելու՝ կասեի, որ ցանկանում եմ գոնե մեկ օր նորից քայլել այն ճանապարհով, որն ինձ տարավ բանասիրական ֆակուլտետ՝ հայոց լեզվի և գրականության անհուն խորքերը: Կարծես երեկ լիներ, որ փոքր, բայց վստահ քայլերով շարժվեցի դեպի համալսարան, իսկ այսօր, արդեն ավարտելով, նորովի գիտակցում եմ ստանձնածս մասնագիտության կարևորությունն ու արդիականությունը: Ինչ մասնագիտություն էլ ձեռք բերենք կյանքում, առաջնահերթ դերը կարևոր է տալ մարդ կոչումը պահելու և այն մինչև վերջ տանելու առաքելությանը:

Ուրախ եմ, որ քայլերս բերեցին այսօրվա մասնագիտությանս, որի ձեռքբերման ճանապարհին ես հանդիպեցի նվիրված դասախոսների, ովքեր չխնայեցին մեզ փոխանցել իրենց փորձն ու գիտելիքը: Կարոտով ողողված աչքերով ես մտնում այն լսարանները, ուր անցել են կյանքիդ գեղեցիկ օրերը՝ լի չկրկնվող և լուսավոր ակնթարթներով: Կարևոր է ամեն տեղ տեսնել լավը, դրականը, բարին, նույնն էլ այս շրջանում. ուսանող դառնալը համընկնում է ամենից խոցելի շրջանի հետ և, չնայած առաջացած խնդիրներին ու հիասթափություններին, քայլեցի՝ առանց երկմտելու՝ նախևառաջ ինձ ապացուցելու ամեն դժվարության անցողիկ լինելը:

Ամփոփելով խոսքս՝ կասեմ՝ սիրեք կյանքը, թողեք՝ սերն ու ջերմությունը ուղեկցեն ձեզ, միշտ գնացեք ձեր նպատակների ու երազանքների հետևից. չէ՞ որ դրանք իրականանալու հատկություն ունեն, և հիշե՛ք՝ կյանքում ոչինչ պատահական չի լինում:

Լիլիթ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԻ ՓՈՔՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ԻՄ ՓՈՐՁԻ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միշտ դժվար է թողնել այն ամենն, ինչ սիրում ես, մանավանդ երբ սերը փոխադարձ է: Նույնն է նաև բուհն ավարտելու պարագայում:

Չորս տարին կարճ ժամանակ չէ, ավելին՝ այն հնարավորությունների մի ամբողջ փաթեթ է, որը կարող ես բացել հերթով ու որից կարող ես անդադար օգտվել, եթե իհարկե ճիշտ ես օգտագործել առաջին չափաբաժինը: Ի՞նչ տվեց ինձ ՀՊՄՀ-ն, ո՞րն էր հնարավորությունների իմ փաթեթը: Իհարկե գիտելիքն ու մասնագիտական արհեստավարժությունը շատ կարևոր են, բայց դրանց հետ մեկտեղ Մանկավարժականն ինձ տվեց սեփական ուժերը փորձարկելու մի իսկական համակարգ: Ի՞նչ հասցրեցի անել 4 տարիների ընթացքում՝ շնորհիվ բուհի և ֆակուլտետի: Հասցրել եմ լինել Հունգարիայում, որը մեծ դեր խաղաց իմ հետագա ուսանողական տարիների և աշխարհայացքի ձևավորման գործում, մասնակցել Ուսանողական խորհրդի կազմակերպած տարատեսակ միջոցառումներին, լինել լրատվական հատվածի պատասխանատուն, ապրել ուսանողական թոհուբոհով: Հնարավորություն ստացա լինելու նաև ՀՊՄՀ 2019 թվականի լավագույն ուսանողը, ինչը միաժամանակ և՛ հաճելի էր, և՛ պարտավորեցնող, քանի որ դու պետք է լինես լավագույնի օրինակը՝ շատ ու շատ ուսանողների և դիմորդների համար, որի շնորհիվ եղա ե-

րազների ու երազանքների Արևմտյան Հայաստանում:

Ովքեր ամբողջապես ընդգրկված են եղել ուսանողական ակտիվ կյանքում՝ կփաստեն, որ ուսանողի համար իրապես շատ կարևոր է տարին գոնե մեկ-երկու անգամ մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովների՝ թեկուզ ունկնդրի կարգավիճակով, ճանաչողական այցերի, արշավների, լեռնագնացության. այս ամենն օգնում են կոփվել որպես ամուր ու գիտակից ուսանող:

Այս ամբողջ ընթացքում խորհուրդներով փորձով ու գիտելիքներով մշտապես օգնել են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ու ղեկավար կազմն՝ ի դեմս ֆակուլտետի դեկանի և նրա տեղակալների, ովքեր մինչև օրս էլ կարևոր ներդրում ունեն անձնական հաջողությունների և կրթական նոր հնարավորությունների գործում:

Չեմ կարող չնշել աշխատանքային գործունեությանս մասին, որի շնորհիվ մեկ տարվա ընթացքում ձեռք եմ բերել բազմաթիվ կարողություններ ու հմտություններ՝ հայտնվելով գիտական մի դարբնոցում, որ կոչվում է Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն: Այստեղ ինձ սովորեցրել են տիրապետել ժամանակակից գիտնականին անհրաժեշտ ամենանուրբ գործիքակազմին, ինչը կարևոր է յուրաքանչյուր ուսանողի համար: Հայտնվել մի վայրում, ուր տպագրվում ու պատրաստվում է միջազգային գիտաչափական շտեմարանում ընդգրկված ամսագիր՝ իրապես ոչ միայն կարևոր, այլև ողջ կյանքի համար անհրաժեշտ մի հնարավորություն էր, որի համար անչափ շնորհակալ եմ:

Եվ իրապես՝ ամենամեծ հաջողությունը, որ կարող էի ունենալ այստեղ՝ մարդիկ են, ընկերներն ու դասախոսները:

Սա մի փոքր պատմություն է, փոքր ամփոփում՝ Մանկավարժական համալսարանում ունեցած իմ փորձի ու հաջողության մասին: Շնորհակալ եմ բոլորից՝ անսահման սիրո, ջերմության և մեկ ընտանիք լինելու համար:

Տաթև ԱՐՇԱԿՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի շրջանավարտ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2021-2022 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա ընդունելություն

1. Դասավանդման և ուսուցման մեթոդիկա - ԺԳ.00.02 (1 տեղ)

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) անձնագրի պատճեն,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը.

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

3. Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 08-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս.թ. սեպտեմբերի 10-ից 15-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 14.07.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ